ԱՄԲԵՐԴ

ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներ

Ամսական տեսություն
(Փետրվար 2019)

ԵՐԵՎԱՆ 2019

Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լագային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժութային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իարկանացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի

© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնայիյն շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանկային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն
Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

 © ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

Բովանդակություն

Ամփոփ տեսություն 5
1. Պետական պարտատոմսերի շուկա 8
2. Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ 18
3.Ռեպո գործարքներ 35
4.Սվոփ գործարքներ 36
5, Միջբանկային վարկային շուկա 36

Ամփոփ տեսություն

Ամփոփելով 2019թ. Փետրվար ամսին ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներում կնքված գործարքները կարող են նշել, որ.

1. Պետական պարտատոմսերի շուկայում Փետրվար ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 11,790 մլրդ դրամի 8 տեղաբաշխում: Կարճաժամկետ պարտատոմսերի առաջին աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6,3997% և 6,2497%: Միջին եկամտաբերությունը նախորդ ամսվա նույն ժամկետայնության աճուրդից աճել է 0,0239 տոկոսային կետով: Կարճաժամկետ պարտատոմսերի երկրորդ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝ 6,1557% և 6,1296%, իսկ երրորդի ժամանակ՝ 6,1025% և 6,0762%: 2023թ. մարվող միջնաժամկետ 60 ամսական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի պահանջարկը առաջարկին գերազանցել է 1,79 անգամ, իսկ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները եղել են համապատասխանաբար 8,6715% և 8,5092%: Այս պարտատոմսերի աճուրդի արդյունքները, ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը մեղմեցին մանաճը իր հետագա ազդեցությունը կունենա պարտատոմսերի շուկայում ստեղծելով եկամտաբերության աճի միտում:

2. Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ փետրվար ամսին ավելացել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 575,329 մլրդ դրամ (աճել է 8,390 մլրդով), իսկ կարճաժամկետինը աճել է՝ կազմելով 26,461 մլրդ (աճել է 1,018 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը փետրվար ամսվա վերջին կազմել է 6,1887 % (հունվարի վերջին՝ 6,1934%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 12,4895 %՝ նախորդ ամսվա վերջի 12.5484 %-ի փոխարեն:

3. Փետրվար ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 11,784 մլրդ դրամի 67 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 9 տոկոսը՝ 1,077 մլրդ դրամ, ինչը 8 գործարքի արդյունք է: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 10,706 մլրդ դրամ: Կնքված գործարքների 10 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող պետական 30 տարեկան պարտատոմսերով, 25,7 տոկոսը՝ 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ, 2,5 տոկոսը՝ 20 տարեկան 32 թվականին մարվող պետական պարտատոմսերով, 26,6 տոկոսը՝ 2027 թվականին մարվող երկարաժամկետ պետական պարտատոմսերով, իսկ 22,6 տոկոսը՝ 2023թվականին մարվող միջնաժամկետ 60 ամսական պարտատոմսերով:

4. Փետրվար ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 2,392 մլրդ դրամի 67 գործարք: Գործարքները հունվար ամսվա ընթացքում նվազել են մոտ 0,5 տոկոսով: Գործարքների 41,8 տոկոսը կնքվել է 36 թվականին

մարվող 20 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով, 22,7 տոկոսը կնքվել են 27 թվականին մարվող 10 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով: 7,3 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող 30 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով:

5. Դրամային գնանշմամբ կորպորատիվ պարտատոմսերի բորսայական հարթակում կնքվել է մոտ 24, 740 մլն դրամի գործարք: Ընդ որում դրամային պարտատոմսերով կնքված գործարքների ամբողջ ծավալի մոտ 47 %-ը կազմել են «Յունիբանկ» ԲԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմերով գործարքները, իսկ 15 %-ը՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ պարտատոմսերով: Դոլարային պարտատոմսերի շուկայի ծավալը կազմել է մոտ 3,393 մլն դոլար: Դոլարային գործարքների դեպքում "Ամերիաբանկ" ՓԲԸ–ի AMRBB4 բորսայական հապավմամբ արժեկտրոնային պարտատոմերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 57,1 %-ը: Եվրոյով գործարքներ կնքվել են 76,777 հազար եվրո ծավալով:

6. 2019թ փետրվար ամսին բաժնետոմսերի շուկայում գործարքներ է կնքվել միայն Յունիբանկ ԲԲԸ բաժնետոմսերով: Գործարքի ընդհանուր ծավալը կազմել է 5,549 մլն դրամ, գործարքի առարկա են հանդիսացել 24125 հատ բաժնետոմս: Գործարքը կնքվել է 230դրամ գնով: Հասցեական հարթակում գործարքներ են կնքվել միայն Հայէկոնոմբանկ ԲԲԸ բաժնետոմսերով: Գործարքի ծավալը 429,153 մլն դրամ է կազմել:

7. Արտաբորսայական ռեպո շուկայում պետական պարտատոմսերով կնքված ռեպո գործարքների ծավալը փետրվար ամսին կազմել է 261,388 մլրդ դրամ: Գործարքների մոտ 24,6 %-ը կազմել են միջբանկային ռեպո գործարքները, որոնք կնքված գործարքների քանակի առումով կազմել են բոլոր գործարքների 5,5%-ը: Միջբանկային ռեպո գործարքների ծավալը կազմել է 64,262 մլրդ դրամ: Գործարքները կնքվել են գրեթե բոլոր ժամկետայնություններով: Միջբանկային ռեպոների միջին կշռված եկամտաբերությունը ամսվա ընթացքում եղել է 5,79%: Կնքված գործարքների առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները եղել են մոտ համապատասխանաբար՝ 6.25% և 5,00 %:

8. Բորսայական ռեպո շուկայում գործարքները կնքվել են միայն կորպորատիվ պարտատոմսերով: Գործարքի առարկա են հանդիսացել ինչպես դրամային, այնպես էլ դոլարալին պարտատոմսեր: Բորսայական ռեպոյի ընդհանուր ծավալը դրամային պարտատոմսերի դեպքում կազմել է 186.4 մլն դոլար, կնքված գործարքների եկամտաբերությունը 0,91%-6,5% է: Գործարքները կնքվել են 28-226 օր ժամկետայնությամբ: Դոլարային պարտատոմսերով նքված ռեպոնարի ծավալը կազմել է 2,636 մլն դոլար: Գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 2,41%, իսկ ժամկետայնությունը եղել է 3-244 օր միջակայքում:

9. Արտաբորսայում ընդհանուր առմամբ կնքվել են 82,540 մլն դոլարի կամ 40,77 մլրդ դրամի 40 սվոփ գործարք: Ընդ որում միջբանկային շուկայում գործարքները կազմել են կնքված գործարքների 92.08%-ը, որոնց միջին եկամտաբերությունը կազմել է 4,28%: Միջբանկային շուկայից

դուրս կնքված գործարքների եկամտաբերությունը միջինում եղել է 3.08%: Առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները համապատասխանաբար 3.75% և 2.75%:

10. Միջբանկային վարկային շուկայում փետրվար ամսին կնքվել են 36 վարկայն գործարքներ 3 արժույթներով՝ դրամ, դոլար, եվրո: Դրամային վարկերի ծավալը կազմել է մոտ 46,250 մլրդ դրամ: Գործարքները հիմնականում կնքվել են մինչև 7 օր մարման ժամկետով: Գործարքների միջին եկամտաբերությունը կազմել է 5,74%: ԱՄՆ դոլարով ընդհանուր առմամբ կնքվել են 22,6 մլն դոլարի միջբանկային վարկային 12 գործարք, որոնց միջին տոկոսադրույքները մինչև 7 օր ժամկետայնության դեպքում կազմել է 1,94%, 15-28օր ժամկետայնության դեպքում՝ 2,50, 1-3 ամիս ժամկետայնության դեպքում՝ 3%, իսկ 3-6 ամիս ժամկետայնության դեպքում՝ 3,5%: Կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 2,46 % Միջբանկային վարկային շուկայում կնքվել է եվրոյով 1 վարկային գործարք, 1,5 մլն եվրո ծավալով, 1% եկամտաբերությամբ և 1-3 ամիս ժամկետայնությամբ:1.Պետական պարտատոմսերի շուկա

1. Պետական պարտատոմսերի շուկա

Պետական պարտատոմսերի առաջնային շուկա

Պետական պարտատոմսերի շուկայում Փետրվար ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 11,790 մլրդ դրամի 8 տեղաբաշխում:

Աղյուսակ 1.

2019 թ. Փետրվար ամսին պետական պարտատոմսերի տեղաբաշխումները և եկամտաբերությունը

	Թողարկման համար	Մարման ամսաթիվ	Աճուրդի ամսաթիվ	Բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ)	Սահմանային եկամտաբերություն	Միջին կշռված եկամտաբերությունը
1	AMGT52032209	03.02.2020	04.02.2019	1,000,000,000	6.3997	6.2497
2	AMGT52032209	03.02.2020	05.02.2019	Պահանջարկ չի եղել		
3	AMGN60294235	29.04.2023	12.02.2019	7,000,000,000	8.6715	8.5092
4	AMGN60294235	29.04.2023	13.02.2019	1,390,000,000	8.5092	8.5092
5	AMGT5204B198	04.11.2019	18.02.2019	1,000,000,000	6.1557	6.1296
6	AMGT5204B198	04.11.2019	19.02.2019	200,000,000	6.1296	6.1296
7	AMGT52036192	03.06.2019	25.03.2019	1,000,000,000	6.1025	6.0762
8	AMGT52036192	03.06.2019	26.03.2019	200,000,000	6.0762	6.0762

Ընդհանուր առմամբ պարտատոմսերի պահանջարկը մոտ 1,56 անգամ գերազանցել է պահանջարկին: 52 շաբաթական պարտատոմսի երեք տեղաբաշխում է տեղի ունեցել: Պահանջարկը առաջին և երկրորդ աճուրդների ժամանակ գերազանցել է առաջարկը 1,41 անգամ, իսկ երրորդ տեղաբաշխման ժամանակ՝ 1,21 անգամ: Առաջին աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6,3997% և 6,2497%: Միջին եկամտաբերությունը նախորդ ամսվա նույն ժամկետայնության աճուրդից աճել է 0,0239 տոկոսային կետով: Կարճաժամկետ պարտատոմսերի երկրորդ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են

համապատասխանաբար՝ 6,1557% և 6,1296%, իսկ երրորդի ժամանակ՝ 6,1025% և 6,0762%: Նշենք նաև, որ առաջին աճուրդի ժամանակ լրացուցիչ աճուրդի ժամանակ պահանջարկ չի եղել: 2023թ. մարվող միջնաժամկետ 60 ամսական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի պահանջարկը առաջարկին գերազանցել է 1,79 անգամ, իսկ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները եղել են համապատասխանաբար 8,6715% և 8,5092%: Այս պարտատոմսի միջին եկամտաբերությունը նախորդ աճուրդի նկատմամբ աճել է 0,198 տոկոսային կետով: Այս պարտատոմսերի աճուրդի արդյունքները, ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը մեղմեցին մանաճը իր հետագա ազդեցությունը կունենա պարտատոմսերի շուկայում ստեղծելով եկամտաբերության աճի միտում:

Պետական պարտատոմսերի աճուրդներին պահանջարկի մեծ ծավալը պայմանավորված է եղել հիմնականում շուկայում առկա իրացվելիության ավելցուկով: Սակայն երկրորդային շուկայում պարտատոմսերի եկամտաբերությունները երկարաժամկետ գործիքների դեպքում հասել են իրենց պատմական նվազագույն մակարդակին, և շուկայի մասնակիցների մոտ տոկոսադրույքների հետագա նվազման սպասումները գնալով պակասում են, ինչի արդյունքում 2019թ հունվարին երկարաժամկետ 10 տարեկան պարտատոմսի աճուրդի եկամտաբերության աճի եկամտաբերության հետագա աճի միտման սպասումներ ստեղծեցին շուկայի մասնակիցների մոտ, սակայն փետրվարին ԿԲ կողմից վերաֆինանսավորման եկամտաբերության նվազեցումը մեղմեց այդ սպասումները

Փետրվար ամսին Ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի հետգնումներ չի իրականացրել:

Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ փետրվար ամսին ավելացել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 575,329 մլրդ դրամ (աճել է 8,390 մլրդով), իսկ կարճաժամկետինը աճել է՝ կազմելով 26,461 մլրդ (աճել է 1,018 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը փետրվար ամսվա վերջին կազմել է 6,1887 % (հունվարի վերջին՝ 6,1934%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 12,4895 %՝ նախորդ ամսվա վերջի 12.5484 %-ի փոխարեն:

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկա

Արտաբորսայական

Փետրվար ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 11,784 մլրդ դրամի 67 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 9 տոկոսը՝ 1,077 մլրդ դրամ, ինչը 8 գործարքի արդյունք է: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 10,706 մլրդ դրամ: Կնքված գործարքների

10 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող պետական 30 տարեկան պարտատոմսերով, 25,7 տոկոսը՝ 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ, 2,5 տոկոսը՝ 20 տարեկան 32 թվականին մարվող պետական պարտատոմսերով, 26,6 տոկոսը՝ 2027 թվականին մարվող երկարաժամկետ պետական պարտատոմսերով, իսկ 22,6 տոկոսը՝ 2023թվականին մարվող միջնաժամկետ 60 ամսական պարտատոմսերով: Գործարքների կենտրոնացվածության նման պատկերի պատճառը այդ պարտատոմսերով տեղաբաշխման աճուրդներն էին, ինչպես նաև շուկայի մասնակիցների մոտ այդ ժամկետայնության պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճը, դրանց եկամտաբերության միտումները վերջին ամիսների ընթացքում: Մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերով գործարքների ծավալը կազմել է ընդհանույր գործարքների 7,4 տոկոսը:

Եվրոբոնդերով արտաբորսայական շուկայում կնքվել է 1 գործարք 2020թվականին մարվող եվրոբոնդերով՝ 575,7 հազար դոլար ծավալով և 3 տոկոս եկամտաբերությամբ:

Աղյուսակ 2.

2019 թ. Փետրվար ամսին պետական պարտատոմսերի արտաբորսայական շուկայում կնքված գործարքները

Թողարկման համար	Գործարքների ծավալ	Միջին կշռված եկամտաբերություն
AMGB30163472	1,182,858,468	11.0205%
AMGB2029A366	3,031,060,680	10.7540%
AMGB20172327	297,716,632	10.3111%
AMGB1029A276	3,132,673,029	9.7800%
AMGN60294235	2,658,638,013	8.4708%
AMGN60294227	335,637,082	8.1100%
AMGN60294219	59,459,018	7.5000%
AMGN60294201	213,209,317	6.7500%
AMGT52032209	188,236,271	6.1978%
AMGT52131209	684,270,691	5.6750%
ընդամենը	11,783,759,201	

Պետական պարտատոմսերի բորսայական շուկա

Պետական պարտատոմսերի բորսայական շուկան բավականին ակտիվ է եղել:

Աղյուսակ 3

Փետրվար ամսվա ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիայում պետական պարտատոմսերով կնքված գործարքները

ԱՄՏԾ	ՎԵՐՋԻՆ	ՄԻՋ	+/-	ԱՌԱՎ	ՆՎԱԶ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
AMGB1029A276	9.5501	9.6822	-0.305	10.0007	9.5375	20	518,005,000	542,921,913
AMGB2029A366	10.7001	10.7245	-0.1385	10.9	10.7001	10	820,000,000	999,435,440
AMGB30163472	10.9001	10.9001	-0.0829	10.9001	10.9001	2	142,000,000	175,609,483
AMGN36294202	6.5609	6.7198	-0.234	6.8601	6.5599	26	446,000,000	462,605,497
AMGN60294227	8.2409	8.0448	-0.1966	8.299	8	6	51,050,000	53,821,542
AMGN60294235	8.3533	8.4659		8.5022	8.3533	3	157,000,000	158,155,287
					Ընդամենը.	67	2,134,055,000	2,392,549,162

Փետրվար ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 2,392 մլրդ դրամի 67 գործարք: Գործարքները հունվար ամսվա ընթացքում նվազել են մոտ 0,5 տոկոսով: Գործարքների 41,8 տոկոսը կնքվել է 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով, 22,7 տոկոսը կնքվել են 27 թվականին մարվող 10 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով: 7,3 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող 30 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով: Նախորդ ամսվա համեմատ գրեթե բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազման տարբեր միտումներ են ունեցել:

Հասցեական հարթակում գործարք կնքվել է 2023 թվականին մարվող 60 ամսական պարտատոմսերով: Գործարքի ծավալը կազմել է 20,112 մլն դրամ, իսկ եկամտաբերությունը կազմել է 8,5091 %:

Բորսայական հարթակում եվրոբոնդերով գործարքներ չեն կնքվել :

Փետրվար ամսին պետական արժեթղթերի շուկայում գործել են 7 գործակալ բանկեր: Գործակալները պարբերաբար ուղենիշային պարտատոմսերով գնանշումներ են կատարում նաև ֆոնդային բորսայում: Դեկտեմբեր և հունվար ամսիների վերջին օրերի դրությամբ ֆոնդային բորսայում գնանշումների ծավալները նույնպես ընդհանուր առմամբ վկայում են շուկայի ակտիվության մասին:

Աղյուսակ 4.

Ֆոնդային բորսայում ուղենիշային պարտատոմսերի առաջարկի և պահանջարկի եկամտաբերությունները

ԾԱԾԿԱԳԻՐ	31.01.2019		28.02.2019		Փոփոխությունը	
	ՊՀՋ	ՊՀՋ	ՊՀՋ	ԱՌՋ	ՊՀՋ	ԱՌՋ
AMGB1029A276	10	9.85	9.6	9.35	-0.4000	-0.5000
AMGB2029A366	11	10.7001	10.75	10.7001	-0.2500	0.0000
AMGB30163472	11.2001	10.9001	11.1	10.9501	-0.1001	0.0500
AMGN36294202	7.0537	6.8601	6.7	6.55	-0.3537	-0.3101
AMGN60294227	8.2001	8	8.2409	8	0.0408	0.0000
AMGN60294235	8.4644	8.2001	8.5099	8.3001	0.0455	0.1000

Բորսայում գնանշվող բոլոր ուղենիշային պարտատոմսերի ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի եկամտաբերությունները հիմնականում նվազման միտումներ են ունեցել: Բացառություն է կազմում 2022 և 2023թ մարման միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը: Նման պատկերը պայմանավորված է շուկայական ակտիվությամբ, առաջնային շուկայում եկամտաբերության միտումներով:

Դեկտեմբեր ամսվա վերջից ֆինանսաների նախարարությունը հարապարակել է ուղենիշային պարտատոմսերի ցանկը հաջորդ եռամսյակի համար: Ուղենիշային պարտատոմսերի ցանկում փոփխություն տեղի չի ունեցել:

Աղյուսակ 5.

Ուղենիշային պետական պարտատոմսերի ցանկը

Ուղենիշային պարտատոմսեր 01.10.18-31.12.18 ժամանակաշրջանի համար	Ուղենիշային պարտատոմսեր 01.01.19-31.03.19 ժամանակաշրջանի համար
AMGN36294202	AMGN36294202
AMGN60294219	AMGN60294227
AMGN60294235	AMGN60294235
AMGB1029A276	AMGB1029A276
AMGB2029A366	AMGB2029A366
AMGB30163472	AMGB30163472

Առաջնային և երկրորդային շուկաներում պետական պարտատոմսերի եկամտաբերությունների փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունեցել նաև եկամտաբերության կորերի վրա: Այդ ամենը դրսևորվել է հիմնականում եկամտաբերության կորերի աճմամբ:

Գծապատկեր 1.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 31.01.19թ դրությամբ



Գծապատկեր 2.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 28.02.19թ դրությամբ



Բոլոր ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերությունները ունեցել են նվազման միտում: Պատճառը այդ պարտատոմսերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի փոփոխություններն են և դրանց հետագա աճուրդների նկատմամբ սպասումները, ինչպես նաև ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը:

Գծապատկեր 3. Ձեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 31.01.19թ դրությամբ



Գծապատկեր 4. Ձեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 28.02.19թ դրությամբ



Ձեղչատոկոսային պարտատոմսերի դեպքում նույնպես եկամտաբերության կորը նվազել է: Նվազման ազդեցությունը առավել շատ դրսևորվել է առավել երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում:

Գծապատկեր 5. Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկան 2019թ փետրվար ամսվա ընթացքում



Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների տատանումների վերլուծությունը ցույց է տալիս դրանց ընդհանուր առմամբ նվազման միտումը:

Աղյուսակ 6.

Մինչև մարում եկամտաբերությունների վարիացիաները

	6 ամիս/month	*1 տարի/year*	*3 տարի/year*	*5 տարի/year*	*10 տարի/year*	*20 տարի/year*	*30 տարի/year*
1 ամիս	0.0018	0.0029	0.0014	0.0028	0.0108	0.0043	0.0031
3 ամիս	0.0017	0.0031	0.0065	0.0192	0.0478	0.0434	0.0357
1 տարի	0.0065	0.0115	0.0348	0.0404	0.0215	0.0896	0.1373
2 տարի	0.0324	0.0727	0.2454	0.3546	0.4860	0.7392	0.8191
3 տարի	1.9478	2.6726	4.4230	4.4610	3.5627	2.6329	

Վարիացիայի գործակիցների վերլուծությունը պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկայի դիտարկման ժամանակ ցույց է տալիս, որ եկամտաբերության տատանումները առավել մեծ չափով եղել են առավել կարճաժամկետ պարտատոմսերի դեպքում: Ընդ որում վարիացիայի գործակիցների ամենամեծ արժեքը եղել է 2 տարվա կտրվածքով, ինչը պայմանավորված է 2013 թվականից մինչև 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ֆինանսական շուկայում եկամտաբերությունների նվազմամբ և 2014թվականի վերջից ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության խստացման պայմաններում եկամտաբերությունների աճով: Ընդ որում ԿԲ գործիքների ազդեցությունը ավելի մեծ է եղել ավելի կարճ ժամկետայնությամբ պարտատոմսերի եկամտաբերության վրա, ինչը պայմանավորված է կարճաժամկետ միջոցների նկատմամբ շուկայի մասնակիցների կողմից պահանջարկի աճով և երկարաժամկետ հորիզոնում առավել դրական սպասումներով:

2. Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ

Փետրվար ամսվա ընթացքում բորսայում ապացուցակվել են ԱյԴի Բանկի՝ ANLBB2, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ՝ AMRBB3 (Հիմնական (Abond) ցուցակ) և «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ՝ FNCAB1 (Bbond), բորսայական հապավմամբ պարտատոմսերը:

Փետրվարի 22-ին Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակվեցին Ինեկոբանկի դոլարային և դրամային արժույթով պարտատոմսերը: Դրամային պարտատոմսերը (INECB4) 1.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով են, 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով և 9.75% արժեկտրոնային տոկոսադրույքով: Ընկերության դոլարային պարտատոմսերը (INECB3) կցուցակվեն 5 մլն. ԱՄՆ դոլար ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ: Վճարումները կատարվելու են կիսամյակային պարբերականությամբ: Երկու արժույթներով պարտատոմսերն էլ ցուցակվել են Abond հարթակում: Պարտատոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակը Հայաստանի ֆոնդային բորսան շնորհել է Արմենբրոկ ԲԲԸ ներդրումային ընկերությանը:

Փետրվարի 26-ին «Հայաստանի Էկոնոմիկայի Զարգացման Բանկ» ԲԲԸ-ի 2.1 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերը ցուցակվեցին AMX ֆոնդային բորսայի Bbond հարթակում: Ընկերության դոլարային պարտատոմսերը (HEZBB5) 2.1 մլն ԱՄՆ դոլար ծավալով են, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ և վճարումների եռամսյակային պարբերականությամբ:

Փետրվար ամսին Հայաստանի ֆոնդային բորսան թույլատրեց ՖԻՆՔԱ ՓԲԸ վարկային կազմակերպության անվանական պարտատոմսերի տեղաբաշխումը (FNCAB4): Ընդհանուր ծավալը 1.8 միլիոն ԱՄՆ դոլար է, անվանական արժեք՝ 25 ԱՄՆ դոլար, մարման ժամկետը՝ 36 ամիս: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը 6% է:

Հիմնական ցուցակում դեկտեմբեր ամսին եղել են 8 թողարկողի 36 պարտատոմսեր և մեկ հասարակ անվանական բաժնետոմս:

Աղյուսակ 7.

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի հիմնական ցուցակի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Ցուցակ	Դաս	Թողարկող
1	UNIB	A	հասարակ անվանական բաժնետոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
2	UNIBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
3	UNIBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
4	INECB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Ինեկոբանկ» ՓԲԸ
5	AMRBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"Ամերիաբանկ" ՓԲԸ
6	AMRBB5	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
7	AMRBB6	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
8	AMRBB8	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
9	ACBAB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
10	ACBAB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
11	BSTBB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Սևծովյան Առևտրի և զարգացման Բանկ
12	NMCCB2B	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն" ՓԲԸ
13	NMCCB2G	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ
14	NMCCB2H	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ

15	NMCCB2I	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ
16	GLBLB7	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
17	INECB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Ինեկոբանկ» ՓԲԸ
18	ANLBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
19	ANLBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
20	ANLBB5	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
21	COVSB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
22	COVSB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
23	COVSB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
24	ARBKB2G	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
25	ARBKB2F	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
26	ARBKB2H	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
27	ARBKB2I	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
28	ARBKB2J	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
29	COVSB5	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
30	COVSB6	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
31	COVSB7	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ

32	INECB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Ինեկոբանկ» ՓԲԸ
33	ACBAB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
34	ACBAB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
35	UNIBB6	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
36	AMRBB2E	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
37	ANLBB6	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ

Երկրորդային ցուցակում ցուցակված արժեթղթերի քանակը 35-ն էր, որոնցից 3-ը բաժնետոմսեր էին, իսկ 32-ը՝ 7 թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր:

Աղյուսակ 8.
ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի երկրորդային ցուցակի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Ցուցակ	Դաս	Թողարկող
1	AHEK	B	Հասարականվանականբաժնետոմս	«ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ
2	ASEV	B	Հասարակ անվանական բաժնետոմս	«Արփա-Սևան» ԲԲԸ
3	HEZB	B	Հասարակ անվանական բաժնետոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ
4	ARBKB2A	Bbond	Անվանականարժեկտրոնայինպարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
5	ARBKB2B	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
6	ARBKB2D	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
7	ARBKB2E	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
8	AMRBB9	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
9	AMRBB2A	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
10	SWISB7	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

11	SWISB2	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
12	SWISB3	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
13	ARBKBD	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
14	GLBLB3	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
15	GLBLB5	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
17	ARBBB1	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
18	ARBBB3	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
19	ARBBB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
20	HEZBB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ
21	FNCAB2	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
22	UNIBB7	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
23	UNIBB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
24	SWISB4	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
25	SWISB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
26	SWISB6	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
27	SWISB8	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
28	HEZBB4	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ
29	FSCRB2	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Ֆասթ Կրեդիտ Կապիտալ ՓԲԸ
30	AMRBB2B	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
31	AMRBB2C	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
32	AMRBB2D	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
33	UNIBB8	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն

34	SWISB9	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
35	FNCAB3	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
36	AMRBB2F	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ

Ազատ շուկայի հարթակում գրանցված են եղել 12 թողարկողի 6 բաժնետոմս, և 6 կորպորատիվ պարտատոմս:

Աղյուսակ 9.

ՆԱՍԴԱՔՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի ազատ շուկայի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Շուկա	Դաս	Թողարկող
1	ALMS	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Ալմաստ» ԲԲԸ
2	ARBK	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
3	EJWG	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Երևանիոսկերչականգործարան» ԲԲԸ
4	ESHG	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ԵրևանիՇամպայնգինիներիգործարան» ԲԲԸ
5	EVG1	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Երևանիոսկերչականգործարան – 1 Գնոմոն» ԲԲԸ
6	MQER	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Մաքուրերկաթիգործարան» ԲԲԸ
8	ARBBB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ
9	UNIB	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
10	FMGCB1	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն
11	FMGCB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն
12	HEZBB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ
13	FSCRB1	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Ֆասթ Կրեդիտ Կապիտալ ՓԲԸ

Կորպորատիվ պարտատոմսերի շուկաներ

Կորպորատիվ պարտատոմսերի շուկայում գործարքներ են կնքվել դրամով, եվրոյով և դոլարով գնանշվող պարտատոմսերով: Դրամային գնանշմամբ կորպորատիվ պարտատոմսերի բորսայական հարթակում կնքվել է մոտ 24, 740 մլն դրամի գործարք: Ընդ որում դրամային պարտատոմսերով կնքված գործարքների ամբողջ ծավալի մոտ 47 %-ը կազմել են «Յունիբանկ» ԲԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերով գործարքները, իսկ 15 %-ը՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ պարտատոմսերով: Դոլարային պարտատոմսերի շուկայի ծավալը կազմել է մոտ 3,393 մլն դոլար: Դոլարային գործարքների դեպքում "Ամերիաբանկ" ՓԲԸ–ի AMRBB4 բորսայական հապավմամբ արժեկտրոնային պարտատոմսերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 57,1 %-ը: Եվրոյով գործարքներ կնքվել են 76,777 հազար եվրո ծավալով:

Աղյուսակ 10.

Կորպորատիվ պարտատոմսերով բորսայական գործարքները 2019 թ Փետրվար ամսին

Թողարկող	Բորսայական հապավում	ՑՈՒՑ	ՎԵՐՋԻՆ	ՄԻՋ	ԱՐԺ	ԱՌԱՎ	ՆՎԱԶ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ	Տեսակարար կշիռը
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB5	Abond	9.4	9.6249	AMD	9.7001	9.4	3	36	3,701,909	15.0%
ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ	GLBLB7	Abond	10	9.82	AMD	10	9.7523	2	344	3,528,776	14.3%
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB3	Abond	8.8201	8.7167	AMD	8.8201	8.6128	3	21	2,122,749	8.6%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2G	Abond	8.4499	8.4996	AMD	8.8726	8.4499	2	255	2,615,833	10.6%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2J	Abond	9.7001	9.7001	AMD	9.7001	9.7001	1	115	1,147,694	4.6%
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB5	Bbond	9.36	9.36	AMD	9.36	9.36	2	400	4,031,416	16.3%
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB7	Bbond	9.5	9.5	AMD	9.5	9.5	3	500	5,067,952	20.5%
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB8	Bbond	9.5	9.5	AMD	9.5	9.5	1	250	2,523,883	10.2%
							Ընդամենը.	17	1921	24,740,213	100.0%
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB7	Abond	4.1012	4.1032	EUR	4.33	4.1012	2	231	23,362	30.4%
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	SWISB5	Bbond	3.4647	3.4647	EUR	3.4647	3.4647	1	500	53,415	69.6%
							Ընդամենը.	3	731	76,777	100.0%
ԻՆԵԿՈԲԱՆԿ	INECB3	Abond	5.2401	5.2401	USD	5.2401	5.2401	3	264	26,805	0.8%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB4	Abond	2.9402	3.4747	USD	3.7398	2.9402	25	19252	1,938,653	57.1%
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB2	Abond	2.6749	3.1646	USD	3.8004	2.6749	14	1958	200,156	5.9%

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	ACBAB1	Abond	4.2	4.2001	USD	4.2001	4.2	3	244	25,351	0.7%
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB4	Abond	4.75	4.7663	USD	4.94	4.63	12	1312	133,924	3.9%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	4.9	4.9	USD	4.9	4.9	1	29	2,978	0.1%
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB4	Abond	5.45	5.45	USD	5.45	5.45	1	76	7,623	0.2%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2I	Abond	5.5	5.5	USD	5.5002	5.5	6	980	24,541	0.7%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	5.5499	5.5499	USD	5.5499	5.5499	1	201	5,006	0.1%
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB6	Abond	5.5	5.5	USD	5.5	5.5	4	394	39,566	1.2%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB5	Abond	3.95	3.9917	USD	4.2	3.95	2	600	61,208	1.8%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB4	Abond	4.7609	4.6054	USD	4.8	4.4901	11	1732	175,266	5.2%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	5.4446	5.5835	USD	5.7569	5.4446	5	1855	46,812	1.4%
ԻՆԵԿՈԲԱՆԿ	INECB2	Abond	5.5	5.5	USD	5.5	5.5	3	380	38,187	1.1%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB6	Abond	5.45	5.424	USD	5.6	5.2583	7	783	78,341	2.3%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB2	Abond	4.183	4.1759	USD	4.183	4.1719	7	941	96,988	2.9%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB8	Abond	4	4	USD	4	3.9999	2	900	91,275	2.7%
ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB3	Abond	5.3	5.3	USD	5.3	5.3	1	73	7,424	0.2%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB9	Bbond	5.13	5.1421	USD	5.27	5.13	4	1148	116,437	3.4%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB2A	Bbond	4.2309	4.3834	USD	4.4	4.2309	3	996	101,186	3.0%
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	SWISB2	Bbond	3.7501	3.7501	USD	3.7501	3.7501	2	29	29,418	0.9%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2B	Bbond	4.8102	4.6766	USD	4.8102	4.5002	3	464	11,824	0.3%
ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ	GLBLB5	Bbond	6.1	6.1	USD	6.1	6.1	2	300	30,960	0.9%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	5.5499	5.5499	USD	5.55	5.5499	2	200	5,059	0.1%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ	HEZBB4	Bbond	4.8	4.9322	USD	5	4.8	3	738	73,979	2.2%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB2B	Bbond	5.38	5.38	USD	5.38	5.38	1	149	15,005	0.4%
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	SWISB8	Bbond	5.8997	5.9	USD	5.9002	5.8997	2	2	209	0.0%
Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային	FMGCB1	Cbond	4.2254	4.4801	USD	4.6946	4.2254	4	350	9,007	0.3%

կազմակերպություն											
							Ընդամենը.	134	36350	3,393,187	100.0%

Կորպորատիվ պարտատոմսերի բորսայական գործարքների միջին կշռված եկամտաբերությունները նախորդ ամսվա վերջին գործարքների հետ համեմատած նվազել են: Հետագա ժամանակաշրջաններում պարտատոմսերի եկամտաբերությունները կարող են դրսևորել նույն նվազման միտումները՝ կապված ֆինանսական շուկաներում ԿԲ դրամավարկային քաղաքականության մեղմացման, կորպորատիվ պարտատոմսերի ներդրողների ակտիվացման հետ: Դոլարային պարտատոմսերի եկամտաբերության վրա բացասական ազդցություն կարող են ունենալ արտարժույթի շուկայում անորոշությունները և կուրսայն տատանումները:

Ինչպես հունվար ամսին, 2019թ փետրվարին ևս կորպորատիվ պարտատոմսերով հասցեական գործարքներ կնքվել են: Գործարքները կնքվել են երկու արժույթներով:

Աղյուսակ 11.

Կորպորատիվ պարտատոմսերով հասցեական բորսայական գործարքները 2019 թ փետրվար ամսին

ՀԱՊ	ՑՈՒՑ	ՕՐ	ՄԻՋ	ԱՐԺ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
FNCAB2	Bbond	21.02.2019	5.9	AMD	1	585	6,158,658
				Ընդամենը.	1	585	6,158,658
UNIBB6	Abond	28.02.2019	5.4	USD	1	60	6,048
COVSB6	Abond	27.02.2019	5.2698	USD	1	386	39,272
COVSB2	Abond	26.02.2019	3.05	USD	1	300	30,688
AMRBB4	Abond	22.02.2019	3.3201	USD	1	1001	100,862
AMRBB5	Abond	22.02.2019	3.8001	USD	1	2000	204,235
COVSB4	Abond	22.02.2019	4.63	USD	1	200	20,449
ARBKB2H	Abond	22.02.2019	5.35	USD	1	120	3,005
COVSB2	Abond	22.02.2019	3.1999	USD	1	1	102
AMRBB4	Abond	21.02.2019	3.5699	USD	1	1220	122,859

UNIBB3	Abond	20.02.2019	5.4	USD	1	1500	152,430
COVSB6	Abond	20.02.2019	5.35	USD	1	250	25,369
ARBKB2H	Abond	15.02.2019	5.3697	USD	1	28	700
ARBKB2H	Abond	15.02.2019	5.25	USD	1	12	301
ANLBB4	Abond	14.02.2019	4.6501	USD	1	500	50,568
ARBKB2I	Abond	14.02.2019	5.25	USD	1	11887	299,986
COVSB2	Abond	14.02.2019	3.3664	USD	1	3	306
COVSB2	Abond	14.02.2019	3.3664	USD	1	185	18,892
ANLBB6	Abond	13.02.2019	5.25	USD	1	20	2,006
ANLBB4	Abond	11.02.2019	4.4901	USD	1	46	4,653
COVSB2	Abond	08.02.2019	3.8004	USD	1	30	3,059
ARBKB2H	Abond	07.02.2019	5.25	USD	1	279	6,991
COVSB4	Abond	01.02.2019	4.85	USD	1	40	4,073
ARBKB2E	Bbond	08.02.2019	5.4	USD	1	197	5,000
				Ընդամենը.	23	20265	1,101,855

Բաժնետոմսերի շուկաների բորսայական շուկա

2019թ փետրվար ամսին բաժնետոմսերի շուկայում գործարքներ է կնքվել միայն Յունիբանկ ԲԲԸ բաժնետոմսերով: Գործարքի ընդհանուր ծավալը կազմել է 5,549 մլն դրամ, գործարքի առարկա են հանդիսացել 24125 հատ բաժնետոմս: Գործարքը կնքվել է 230դրամ գնով: Հասցեական հարթակում գործարքներ են կնքվել միայն Հայէկոնոմբանկ ԲԲԸ բաժնետոմսերով: Գործարքի ծավալը 429,153 մլն դրամ է կազմել:

Աղյուսակ 12.

Բաժնետոմսերով բորսայական գործարքները 2019 թ փետրվար ամսին

Բորսայական հապավում	ՑՈՒՑ	ՕՐ	ՄԻՋ	ԱՐԺ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
HEZB	B	26.02.2019	9138.33	AMD	1	46667	426,458,511
HEZB	B	11.02.2019	12000	AMD	1	25	300,000
HEZB	B	11.02.2019	13536	AMD	1	66	893,376
HEZB	B	11.02.2019	14600	AMD	1	32	467,200
HEZB	B	01.02.2019	13608	AMD	1	76	1,034,208
				Ընդամենը.	5	46866	429,153,295

Շուկա ստեղծողների գնանշումներ

2019թ Հունվար ամսվա վերջի դրությամբ Ֆոնդային բորսայում գործել են կորպորատիվ պարտատոմսերի 8 շուկա ստեղծողներ: Բորսայում ցուցակված թողարկողներից 17-ի արժեթղթերն ունեն շուկա ստեղծողներ: Շուկա ստեղծող ունեցող արժեթղթերի քանակը 77 է:

Աղյուսակ 13.

Բորսայում ցուցակված արժեթղթերի շուկա ստեղծողները

Բորսայի անդամ	Շուկա ստեղծող սկսած	Հապ.	Թողարկող	Ցուցակ/ազատ շուկա
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	06.07.2018	SWISB8	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	20.06.2018	SWISB7	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	28.12.2017	ARBKB2F	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	20.12.2017	ARBKB2G	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	01.08.2017	SWISB4	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB5	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB6	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	24.01.2019	ANLBB6	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Անելիք	Abond

			Բանկ» ՓԲԸ)	
	21.01.2019	AMRBB2F	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	10.01.2019	FNCAB3	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ	Bbond
	28.12.2018	SWISB9	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	24.12.2018	AMRBB2E	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	21.11.2018	ACBAB3	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
	21.11.2018	ACBAB4	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
	29.10.2018	AMRBB2C	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	29.10.2018	AMRBB2D	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	06.07.2018	SWISB8	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	26.06.2018	AMRBB2A	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	20.06.2018	SWISB7	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	14.03.2018	ACBAB2	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
	13.03.2018	NMCCB2I	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	10.01.2018	AMRBB8	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	25.12.2017	FMGCB1	ԱՀԸ ունիվերսալ վարկային կազմակերպություն	Cbond
	25.12.2017	FMGCB2	ԱՀԸ ունիվերսալ վարկային կազմակերպություն	Cbond
	24.10.2017	ACBAB1	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
	01.08.2017	SWISB4	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB5	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB6	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	14.07.2017	BSTBB1	ՍԱԶԲ	Abond
	12.05.2017	FNCAB2	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ	Bbond
«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ	22.02.2019	INECB4	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	22.02.2019	INECB3	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	24.12.2018	UNIBB6	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	17.12.2018	UNIBB8	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	26.11.2018	UNIBB7	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	17.08.2018	FSCRB1	«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ	Cbond
	17.08.2018	FSCRB2	«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ	Bbond
	03.04.2018	UNIBB4	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	20.03.2018	UNIBB5	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	28.02.2018	ARBBB5	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	19.12.2017	ARBBB3	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	18.12.2017	UNIBB3	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	25.09.2017	ANLBB4	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Ամելիք Բանկ» ՓԲԸ)	Abond
	10.02.2016	UNIB	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	C
	26.06.2015	SWISB2	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	26.06.2015	SWISB3	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
«Կապիտալ Ինվեստմընթս»	01.03.2019	HEZBB5	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond

ՓԲԸ	03.08.2018	HEZBB4	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	18.01.2018	HEZBB3	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	18.01.2018	HEZBB2	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Cbond
	18.12.2017	COVSB4	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
	20.09.2017	COVSB3	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
	26.05.2017	COVSB2	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	22.08.2018	AMRBB2B	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	18.06.2018	AMRBB9	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
«ՖՅՈՒՋՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	27.08.2018	ARBKB2J	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	23.07.2018	ARBKB2I	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	14.07.2017	BSTBB1	ՍԱՁԲ	Abond
«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ	14.12.2018	GLBLB7	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Abond
	11.12.2017	GLBLB5	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	06.12.2016	GLBLB3	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	21.11.2016	ARBKB2D	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	08.07.2016	ARBKB2B	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	28.09.2018	INECB2	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	05.09.2018	COVSB5	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
	05.09.2018	COVSB6	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
	05.09.2018	COVSB7	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
	03.04.2018	ARBKB2H	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	22.12.2017	ANLBB5	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Անելիք Բանկ» ՓԲԸ)	Abond
	30.11.2017	ARBKB2E	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	17.10.2017	AMRBB6	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	31.08.2017	AMRBB5	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	20.04.2017	AMRBB4	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	09.12.2016	NMCCB2H	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	24.11.2016	NMCCB2G	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	17.07.2014	NMCCB2B	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	02.04.2010	AHEK	«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ	B

Բաժնետոմսերի թողարկողներից երկուսն ունեն շուկա ստեղծողներ, "Արցախ ՀԷԿ" ԲԲԸ-ն և «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Աղյուսակ 14.

Բաժնետոմսերի շուկա ստեղծողների գնանշումները 28.02.19 դրությամբ.

Բորսայական հապավում	Ցուցակման մակարդակ	Պահանջարկի գին	Առաջարկի գին
UNIB	A	230	240
AHEK	B	1,070	1,120

Աղյուսակ 15.

Կորպորատիվ պարտատոմսերի շուկա ստեղծողների գնանշումները 28.02.19թ դրությամբ

Բորսայական հապավում	ցուցակ	արժույթ	28.12.2018		31.01,2019		փոփոխություն	
			ՊՀՋ	ԱՌՋ	ՊՀՋ	ԱՌՋ	ԱՌՋ	ՊՀՋ
NMCCB2B	Abond	AMD	6.7561	6.3266	6.6907	6.2853	-0.0654	-0.0413
NMCCB2G	Abond	AMD	7.0065	6.5438	6.9447	6.5049	-0.0618	-0.0389
NMCCB2H	Abond	AMD	6.9978	6.5515	6.9505	6.5002	-0.0473	-0.0513
ANLBB3	Abond	AMD	7.75	7.25	6.95	6.5	-0.8	-0.75
BSTBB1	Abond	AMD	7.5	7.1894	7.5	7.1894	0	0
COVSB3	Abond	AMD	8.83	8.2551	8.8211	8.2452	-0.0089	-0.0099
ARBKB2G	Abond	AMD	8.8726	8.4499	8.8725	8.4499	-0.0001	0
NMCCB2I	Abond	AMD	7.5	7.0423	7.5	7.0423	0	0
ACBAB2	Abond	AMD	9	8.4507	9	8.4507	0	0
ARBKB2J	Abond	AMD	9.7001	9.1	9.7001	9.1	0	0
COVSB5	Abond	AMD	9.7003	9.4	9.7001	9.4	-0.0002	0
ACBAB4	Abond	AMD	9.5	8.9201	9.5	8.9201	0	0
GLBLB7	Abond	AMD	10.4315	9.7508	10.4296	9.7494	-0.0019	-0.0014
INECB4	Abond	AMD			9.7301	9.1	-	-

FNCAB2	Bbond	AMD	5.9001	5.6191	5.9	5.6191	-0.0001	0
SWISB6	Bbond	AMD	9.5	9.4	9.5	9.4001	0	0.0001
UNIBB5	Bbond	AMD	9.36	8.75	9.36	8.75	0	0
SWISB7	Bbond	AMD	10	9.9501	10	9.8499	0	-0.1002
AMRBB2D	Bbond	AMD	9.2001	8.6385	9.2001	8.6385	0	0
UNIBB7	Bbond	AMD	9.5	8.9	9.5	8.9	0	0
UNIBB8	Bbond	AMD	9.5	8.9	9.5	8.9	0	0
AMRBB2E	Bbond	AMD	9.75	9.1549	9.75	9.1549	0	0
FNCAB3	Bbond	AMD	10.5	10	10.5	10	0	0
FMGCB2	Cbond	AMD	9	8.4507	9	8.4507	0	0
HEZBB2	Cbond	AMD	9.0601	8.47	9.0601	8.4701	0	0.0001
FSCRB1	Cbond	AMD	9.8001	9.2001	9.8001	9.2001	0	0
AMRBB6	Abond	ԱՐԺ	3.2999	3.18	3.3	3.1801	0.0001	0.0001
COVSB7	Abond	EUR	4.33	4.0998	4.33	4.1023	0	0.0025
SWISB5	Bbond	EUR	3.69	3.5001	3.45	3.3499	-0.24	-0.1502
AMRBB4	Abond	USD	3.6999	3.5599	2.9603	2.8501	-0.7396	-0.7098
COVSB2	Abond	USD	3.7004	3.5526	2.7	2.5252	-1.0004	-1.0274
AMRBB5	Abond	USD	4.3099	4.1501	3.4801	3.35	-0.8298	-0.8001
ANLBB4	Abond	USD	4.4901	4.2001	4.54	4.2502	0.0499	0.0501
ACBAB1	Abond	USD	4.2001	4.0473	4.2001	4.0472	0	-0.0001
COVSB4	Abond	USD	5	4.678	4.75	4.4501	-0.25	-0.2279
UNIBB3	Abond	USD	5.6	5.25	5.35	5	-0.25	-0.25
ANLBB5	Abond	USD	4.9001	4.5999	4.9001	4.6	0	0.0001
ARBKB2F	Abond	USD	5.7431	5.4447	5.5848	5.2953	-0.1583	-0.1494
AMRBB8	Abond	USD	3.9999	3.8462	4	3.8462	0.0001	0
UNIBB4	Abond	USD	5.35	5	5.45	5.1	0.1	0.1
ARBKB2H	Abond	USD	5.55	5.2001	5.55	5.2	0	-0.0001
ARBKB2I	Abond	USD	5.5002	5.1501	5.5	5.1501	-0.0002	0
COVSB6	Abond	USD	5.45	5.1	5.45	5.0999	0	-0.0001

INECB2	Abond	USD	5.5	5.1501	5.5	5.1501	0	0
ACBAB3	Abond	USD	5	4.6948	5	4.6948	0	0
UNIBB6	Abond	USD	5.8	5.45	5.5	5.15	-0.3	-0.3
ANLBB6	Abond	USD	5.5	5.1643	5.5	5.1643	0	0
INECB3	Abond	USD			5.2401	4.9	-	-
SWISB2	Bbond	USD	4	3.7501	3.2	3.0001	-0.8	-0.75
SWISB3	Bbond	USD	4.8	4.5	4.2801	4.0002	-0.5199	-0.4998
ARBKB2B	Bbond	USD	4.8102	4.5	4.7603	4.45	-0.0499	-0.05
ARBKB2D	Bbond	USD	5.0202	4.7003	4.9702	4.65	-0.05	-0.0503
GLBLB3	Bbond	USD	6.04	5.6502	5.9894	5.6	-0.0506	-0.0502
SWISB4	Bbond	USD	6.2	5.8499	6	5.8	-0.2	-0.0499
ARBKB2E	Bbond	USD	5.5499	5.2001	5.55	5.2001	0.0001	0
GLBLB5	Bbond	USD	6.5	6.1	6.4	6	-0.1	-0.1
ARBBB3	Bbond	USD	4.8	4.5	4.65	4.35	-0.15	-0.15
HEZBB3	Bbond	USD	5.0199	4.7	4.9501	4.63	-0.0698	-0.07
ARBBB5	Bbond	USD	5	4.75	4.8	4.5	-0.2	-0.25
AMRBB9	Bbond	USD	5.38	5.13	5.38	-	0	-
AMRBB2A	Bbond	USD	4.4	4.2309	4.2	4.0385	-0.2	-0.1924
SWISB8	Bbond	USD	6.21	5.9007	6	5.8003	-0.21	-0.1004
HEZBB4	Bbond	USD	5.08	4.75	5	4.6799	-0.08	-0.0701
FSCRB2	Bbond	USD	6.4	6	6.4001	6	0.0001	0
AMRBB2B	Bbond	USD	5.4381	5.1801	5.4381	5.1801	0	0
AMRBB2C	Bbond	USD	5	4.6948	5	4.6948	0	0
SWISB9	Bbond	USD	6	5.6338	6	5.6338	0	0
AMRBB2F	Bbond	USD	5	4.6948	5	4.6948	0	0
FMGCB1	Cbond	USD	5	4.6948	4.1997	3.9439	-0.8003	-0.7509

Գնանշումներում եկամտաբերությունների նվազեցումները պայմանավորված չեն եղել թողարկողների ֆինանսական վիճակներով կամ դրանց սպասումներով: Պատճառները հիմնականում պայմանավարված են եղել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի հետ կապված սպասումներով և պետական պարտատոմսերի շուկայում եկամտաբերությունների միտումներով:

3.Ռեպո գործարքներ

*Արտաբորսայական ռեպո շուկայում պետական պարտատոմսերով կնքված ռեպո գործարքների ծավալը փետրվար ամսին կազմել է **261,388** մլրդ դրամ: Գործարքների մոտ **24,6** %-ը կազմել են միջբանկային ռեպո գործարքները, որոնք կնքված գործարքների քանակի առումով կազմել են բոլոր գործարքների **5,5**%-ը:*

*Միջբանկային ռեպո գործարքների ծավալը կազմել է 64,262 մլրդ դրամ: Գործարքները կնքվել են գրեթե բոլոր ժամկետայնություններով: Միջբանկային ռեպոների միջին կշռված եկամտաբերությունը ամսվա ընթացքում եղել է **5,79**%: Կնքված գործարքների առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները եղել են մոտ համապատասխանաբար՝ 6.25% և **5,00** %:*

Միջբանկային շուկայից դուրս կնքված ռեպո գործարքների ծավալը կազմել է մոտ **197,126** մլրդ դրամ: Կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է **6.29** %: Ընդ որում ամենացածր եկամտաբերությամբ այս շուկայում սովորաբար գործարքներ են կնքվում ներդրումային ընկերությունների և բանկերի միջև: Առավելագույն եկամտաբերությունը այս ամսվա ընթացքում կազմել է 9.**50**%, սակայն աննշան ծավալի պատճառով էական ազդեցություն չի գործել ընդհանուր շուկայական ծավալների վրա: Նվազագույն եկամտաբերությունը կազմել է 4,25%:

Եվրոպարտատոմսերով ռեպոների շուկայում գործարքների ծավալը եղել է մոտ 1,437 մլրդ դրամ, ինչը 5 գործարքի արդյունք է: Գործարքները կնքվել են միայն միջբանկայինշուկայից դուրս: Բոլոր գործարքների եկամտաբերությունը 3% է: Գործարքները կնքվել են տարբեր ժամկետներով:

Բորսայական ռեպո շուկայում գործարքները կնքվել են միայն կորպորատիվ պարտատոմսերով: Գործարքի առարկա են հանդիսացել ինչպես դրամային, այնպես էլ դոլարային պարտատոմսեր: Բորսայական ռեպոյի ընդհանուր ծավալը դրամային պարտատոմսերի դեպքում կազմել է 186.4 մլն դոլար, կնքված գործարքների եկամտաբերությունը 0,91%-6,5% է: Գործարքները կնքվել են 28-226 օր ժամկետայնությամբ: Դոլարային պարտատոմսերով նքված ռեպոնարի ծավալը կազմել է 2,636 մլն դոլար: Գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 2,41%, իսկ ժամկետայնությունը եղել է 3-244 օր միջակայքում:

4.Սվոփ գործարքներ

Բորսայական հարթակում փետրվար ամսվա ընթացքում սվոփ գործարքներ չեն կնքվել:

Արտաբորսայում ընդհանուր առմամբ կնքվել են **82,540** մլն դոլարի կամ **40,77 մլրդ** դրամի 40 սվոփ գործարք: Ընդ որում միջբանկային շուկայում գործարքները կազմել են կնքված գործարքների 92.08%-ը, որոնց միջին եկամտաբերությունը կազմել է 4,28%: Միջբանկային շուկայից դուրս կնքված գործարքների եկամտաբերությունը միջինում եղել է 3.08%: Առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները համապատասխանաբար 3.75% և 2.75%:

Փետրվար ամսին եվրոյով կնքվել է 7 սվոփ գործարք 16.500 մլն եվրո կամ 9,144 մլրդ ծավալով և 5,23% միջին կշռված եկամտաբերությամբ:

5, Միջբանկային վարկային շուկա

Միջբանկային վարկային շուկայում փետրվար ամսին կնքվել են 36 վարկայն գործարքներ 3 արժույթներով՝ դրամ, դոլար, եվրո: Դրամային վարկերի ծավալը կազմել է մոտ **46,250** մլրդ դրամ: Գործարքները հիմնականում կնքվել են մինչև 7 օր մարման ժամկետով: Գործարքների միջին եկամտաբերությունը կազմել է **5,74%**:

ԱՄՆ դոլարով ընդհանուր առմամբ կնքվել են 22,6 մլն դոլարի միջբանկային վարկային 12 գործարք, որոնց միջին տոկոսադրույքները մինչև 7 օր ժամկետայնության դեպքում կազմել է **1,94%**, 15-28օր ժամկետայնության դեպքում՝ 2,50, 1-3 ամիս ժամկետայնության դեպքում՝ 3%, իսկ 3-6 ամիս ժամկետայնության դեպքում՝ 3,5%**:** Կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 2,46 %

Փետրվար ամսին միջբանկային վարկային շուկայում կնքվել է եվրոյով 1 վարկային գործարք, 1,5 մլն եվրո ծավալով, 1% եկամտաբերությամբ և 1-3 ամիս ժամկետայնությամբ: